գնա արտաքս։

Այս պատուական Պատանին Յաբեթի որդւոյ Նոյի Նախնին մեր սերնդոց իւրովք թագաւորեաց ի վերայ տան և ի վերայ սեպհական ժառանգութեանն իւրոյ Աբրահամեան և ի վերայ ժողովրդեան Հայոց աւելի քանիթէ երկու հազար ամս, մինչև ի ժամանակս թագաւորութեան Վահէի որդւոյ Վահանայ, այլ որպէս սովորութենէ բնութեանս մարդոյ ազատապէս ընթանալ առ ի միտս իւր ըստ կամաց և ըստ հաճոյից իւրոց, այժմոյս պակասին սորայ ի թագաւորութենէ, որում պակասութիւնն որ հաճեսցի ի միտս ձեր մտածելոյ ի վերայ սորայ կամք ձեր լիցի, կատարումն բանին այս եղև զի Վահէոս այս ընդիմանալով Աղէքսանդր մակեդոնացւոյ՝ մեռանի ի նմանէ. յայնմ ժամանակի դադարի թագաւորութիւն ի ցեղէն Յաբեթեան և Հայկ Արամեա որ եղև ժամանակն իբր երկու հազար ամս, և մտանէ առ մեզ Վաղարշակ եղբայր Արշակայ պահլաւունին խոստանալով հովուել մեզ հայրական գթովք, միևնոյն որպէս ի վեր ասացի բնութիւնն և բարութիւնն Հայոց հարկեցան ըստ բնութեան հիւրընկալութեան իւրեանց սիրով ընդունեցին Վաղարշակայ, որ թագաւորեաց սերնդովք իւրովք ի վերայ տանն Հայոց՝ աւելի կամ պակաս հինգ հարիւր ամս, մինչև ժամանակս թագաւորութեան